ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1963 Общественные науки

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ՀԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ռ. Ա. Իշխանյան

ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆՄՈՒՇՆԵՐ

Հայ գրքի և տպագրության պատմությունը հայագիտության մի կարևոր բնագավառն է, և այդ ուղղությամբ ժամանակին բանասիրությունը բավական աշխատանք կատարել է։ Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում հայկական հին տպագրությունը (1512—1800 թթ.), որի հարցերով ժամանակին զբաղվել են անվանի շատ հայագետներ (Ղ. Ալիշան, Լեո, Գ. Գովրիկյան, Գ. Զարբհանալյան, Գ. Գալեմքյարյան, Գ. Լևոնյան, Ա. Ալպոյաճյան, Թեոդիկ, Վ. Զարդարյան և ուրիշներ)։ Այսօր հրապարակի վրա են առանձին գրքերով մի քանի շատ արժեքավոր աշխատություններ և մի շարք հոդվածներ, որոնք լուսաբանում են հայ հին տպագրիչների գործունեության հարցերը։

Բավական ժամանակ է սակայն, որ հայագիտության այս շատ հետաքրքիր բնագավառը անուշադրության է մատնված և այդ ուղղությամբ նոր ուսումնասիրություններ չեն կատարվում։

Հին տպագիր գրքի պատմության լավագույն աղբյուրները հենց հնատիպ գրքերն են։ Դրանք են անցյալի մեր տպագրիչների մեծ ու ծանր աշխատանքի արդյունքը և դրանք են ամենից ավելի լավ պատմում այդ տպագրիչների մասին։ Հայկական հին տպագրության պատմությանը նվիրված ուսումնասիրությունները հիմնականում գրվել են հնատիպ գրքերի հաղորդած տվյալների, հատկապես նրանց հիշատակարանների հիման վրա։ Եվ քիչ չեն դեպքերը, երբ պատմաբաններին ու մատենագետներին ծանոթ չեն եղել մի շարք հնատիպ գրքեր ու նրանց պարունակած տեղեկությունները, որը և ուսումնասիրությունների մեջ թերությունների ու սխալ մեկնաբանությունների պատճառ է դարձել։

Առաջներում սովորություն կար հայագիտական մամուլում հրապարակել նոր հայտնաբերված հնատիպ գրքերի նկարագրությունները, որոնք շտկում և լրացնում էին եղած տեսակետները։ Վերջերս երկար ընդմիջումից հետո այդպիսի նյութեր տպագրվեցին «Բանբեր Մատենադարանի» վերջին համարներում[1], ուր նկարագրված են մատենագիտությանը անծանոթ 13 անուն հնատիպ գրքեր։

Աշխատելով հայ հնատիպ գրքերի ժամանակագրական ցուցակի կազմման վրա՝ Մատենադարանի, Հանրային գրադարանի և Պատմության թանգարանի հավաքածուների մեջ մենք հայտնաբերեցինք տարբեր տեղերից այդ գրապահոցները մուտք գործած մոտ 40 անուն հնատիպ գրքեր, որոնք մեծ մասամբ ծանոթ չեն եղել մեր բանասերներին և մատենագետներին, իսկ մի քանիսն էլ ծանոթ են եղել միայն կողմնակի գրավոր աղբյուրներից։

---

1 Տե՛ս Շ. Շահնազարյանի հաղորդումները, «Բանբեր Մատենադարանի», № 4, 5։